ՄԱՀԱՑՈՒՑԱԿՔ·

Անցեալ Սեպտեմբեր ամսի 27 ին Մամբրէ Վարդապետ Գրիգորեան մօտ 50 տարեկան հասակում կնքեց իւր մահկանացուն ի մեծ տրտմութիւն միաբանութեանս։

Հանգուցեալը Ալէքսանդրապոլու գաւառի Զրախլու գիւղից էր և պատանեկական հասակում գնալով ուխտ Ս. Երուսաղէմ՝ այնտեղ կրօնաւորուել էր։ Վարդապետանալուց յետոյ հիւանդութեան պատճառով հեռանալով Ս. Երուսաղէմի միաբանութիւնից՝ 1866 թուին եկաւ Հայրենիք, և սկզբում նշանակուեց Հաղբատի վանքի Վանահայր։ յետոյ հանգուցեալ Վեհափառ Հայրապետի հաճութեամբ նշանակուեց Ս. Էջմիածնի ագարակի տեսուչ։ 1882 թուին արձակուելով յիշեալ պաշտօնից՝ նշանակուեց Սարդարապատու գաւառակի Հայ գիւղօրէից բարեկարգիչ։ Նոյն պաշտօնը կատարում էր Հանգուցեալը մինչև իւր կարճատեւ հիւանդութիւնից յետոյ՝ մահը։ Հանգուցեալը վարձատրուած էր սև կերպասեայ փիլոնով և վարդապետական ականակուռ լանջական խաչով։

Անցեալ Հոկտեմ. 2ին հեռագիրը գուժեց Հին Նախիջևանի Եպիսկոպոս Վաղարշապատցի Երամեան Յովհաննէս Վարդապետի մահը։

Հանգուցեալը 1856 թուին մտնելով Մայր Աթոռոյս Ժառանգաւորաց դպրանոցը՝ աւարտում է իւր ուսումն և ձեռնադրվում Սարկաւագ Յովսեան Գրիգոր Արքեպիսկոպոսից 1860 ին Ս. Գայիանէի վանքում։ 1864 ին նոյն Եպիսկոպոսից ձեռնադրվում է Արեղայ։ Հանգուցեալը թէ Սարկաւագութեան և թէ Արեղայութեան ժամանակ եղել է Հայոց լեզուի և կրօնի դասատու Մայր Աթոռոյս Դպրանոցում և մի տարի ևս Երևանու Հոգ. Դպրանոցում։ մի տարի ևս վարել է Մայր Աթոռոյս Ծախսարարութեան պաշտօնը։ Հանգուցեալը իւր գանազան պաշտօնավարութեան համար վարձատրուել է Մատթէոս Կաթուղիկոսից 1865 ին վարդապետական ականակուռ լանջական խաչով և 1867ին ստացել է Վեհապետեան Գէորգ Արքեպիսկոպոսից ծիրանեգոյն ծաղկեայ փիլոն։ Գեր. Գրիգոր Արքեպիսկոպոս Յովսեանի հետ Յովհաննէս Վարդապետ Երեմեանը գնացած լինելով Թավրիզ՝ միշտ աջակից է գտնուել առաջնորդին և դպրոցական գործում մեծ աշխատանք է գործ դրել։ 1874 թուին երբ բացուեց Ս. Էջմիածնի ճեմարանը՝ Հանգուցեալը նշանակուեց կրօնի դասատու, և մի տարուց յետոյ՝ Եպիսկոպոսով գնաց Տաթև։ Այդ տեղ Հանգուցելոյ պաշտօնավարութիւնը սակաւ ինչ մնալ կերպարանք ստացաւ և ուղարկուեց Արոտնայ վանքը, իսկ այնտեղից Գեր. Գրիգոր Արքեպիսկոպոս Յովսեանի թախանձանքը և բարձրագոյն իշխանութեան տնօրէնութեամբ փոխադրուեց Երնջակի Ս. Կարապետի վանքը։ Ուր ուրեմն տարբոյս սկզբներում՝ նշանակուեց Հին — Նախիջևանի Եպիսկոպոս՝ ուր և կնքեց իւր մահկանացուն մօտաւորապէս 43 տարեկան հասակում։

Այսպէս ուրեմն Միաբանութիւնս դժբաղդութիւն ունեցաւ կարճ միջոցի մէջ սգալ երկու վարդապետների մահը՝ որոնք դեռ երկար ժամանակ կարող էին ազգին ծառայել։ Հանգուցեալ Հարց յիշատակը անմոռաց ունելով՝ Միաբանութեանս մնում է աղօթել առ ողորմածն Աստուած, ողորմել և ի լոյս երեսաց իւրոց հանգուցանել զՀոգիս Հանգուցելոցն։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.